



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

1. Ընդհանուր դրույթներ.

- 1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ֆակուլտետի մեթոդական խորհրդի իրավասությունները, ձևավորման և աշխատանքի կարգը:
- 1.2. Համալսարանի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգը հաստատում է Համալսարանի գիտական խորհուրդը: Համալսարանի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:

2. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի կարգավիճակը և կազմը.

- 2.1. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ուսումնամեթոդական (գիտամեթոդական) հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է, որը կոչված է նպաստելու ֆակուլտետում տարվող ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքների կատարելագործմանը և դրանց արդյունավետության բարձրացմանը:
- 2.2 Մեթոդական խորհուրդը ձևավորվում է համամասնական սկզբունքով՝ յուրաքանչյուր ամբիոնից երկուական անդամ, որոնք ամբիոնների ներկայացմամբ ընտրվում են ֆակուլտետի խորհրդում:
- 2.3 Մեթոդական խորհրդի նախագահին դեկանի առաջարկությամբ (բաց քվեարկությամբ) ընտրում է ֆակուլտետի խորհուրդը:
- 2.4. Ելնելով անհրաժեշտությունից՝ մեթոդական խորհուրդը ռոտացիայի (փոխատեղման) սկզբունքով կարող է փոփոխել կազմը:

3. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի խնդիրները.

- 3.1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի խնդիրներն են՝
 - ա) դասավանդվող առարկաների բովանդակության համապատասխանեցումը պետական կրթական չափորոշիչներին և գիտական արդի պահանջներին,
 - բ) ֆակուլտետում իրականացվող մասնագիտություններին համապատասխան՝ ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի քննարկումը և երաշխավորումը,
 - գ) նոր և հեռանկարային մասնագիտությունների ու մասնագիտացումների առաջարկումը՝ համապատասխան կրթական ծրագրերով,
 - դ) դասագրքերի և ուսումնական ձեռնարկների քննարկումը և դրանց գրախոսության կազմակերպումը,
 - ե) դասավանդվող առարկաների յուրացման նոր, մատչելի եղանակների առաջարկումն ու իրականացման կազմակերպումը (հեռուսուցման, համակարգչային ցուցադրական մեթոդների կիրառում և այլն),
 - զ) լաբորատոր և գործնական աշխատանքների բովանդակային համապատասխանեցումը կարդացվող տեսական դասընթացներին,
 - է) ընթացիկ, պետական ու մագիստրական քննությունների հարցաշարերի քննարկումը և

երաշխավորումը, գիտելիքների ստուգման հարցաշարերի ձևավորումը,
ը) ուսումնական պրակտիկաների արդյունավետության բարձրացման ուղիների առաջարկումը,
թ) արտերկրից եկած ուսանողների համար կրթական ծրագրերի մշակումը,
ժ) հետբուհական կրթությանը վերաբերող կրթական ծրագրերի մշակումը և առաջարկումը:

4. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի աշխատակարգը.

- 4.1. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է դեկանի առաջարկով կամ ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:
- 4.2. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահը գումարում և անցկացնում է խորհրդի նիստերը, ղեկավարում է խորհրդի ընթացիկ աշխատանքը, ներկայացնում է այն ֆակուլտետի խորհրդում և այլ կառուցվածքային ստորաբաժանումներում, ստորագրում է մեթոդական խորհրդի ընդունած փաստաթղթերը:
- 4.3. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք անցկացվում են աշխատանքային ծրագրին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության:
- 4.4. Իր գործառույթներն իրականացնելիս ֆակուլտետի մեթոդական խորհուրդը առաջարկություններ է ներկայացնում դեկանին կամ ֆակուլտետի խորհրդին:
- 4.5. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հանձնարարությամբ կատարում է մեթոդական խորհրդի անդամներից մեկը:
- 4.6. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդն իրավունք ունի ֆակուլտետի կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից ստանալ իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր:
- 4.7. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերն իրավասու են խորհրդի անդամների առնվազն կեսի ներկայության դեպքում:
- 4.8. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է խորհրդի նախագահի ձայնը:
- 4.9. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի անդամներն իրավունք ունեն խորհրդի արձանագրության մեջ ներառել հատուկ կարծիք:
- 4.10. Մեթոդական խորհուրդը կատարված աշխատանքների մասին տարեկան հաշվետվություն է ներկայացնում Համալսարանի մեթոդական խորհրդին և համապատասխան ֆակուլտետի խորհրդին: